

# ՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻԹՅՈՒՆ

ԱՐՁՈՒՄՄԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ԵՊՀ դրամնագիտության բեկնածու

անականագիտության բեկնածու

## ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԿՋՔՈՒՆՔՆԵՐԻ ԿԻՐԱԾՈԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Թորոտեյն Վերլենն իր ուշագրավ «Ինչու էկոնոմիկաը էվոլյուցիոն գիտություն չե»<sup>1</sup> տեսակետն արտահայտել է հարյուր տարի առաջ: Ծիշու է, այդ ընթացքում տնտեսագիտության տեսությունը՝ էկոնոմիկաը (economics), լրացվել ու կատարելագործվել է գաղափարական ու մեթոդաբանական առումներով, հարստացել քեյնյան մակրոտնտեսագիտությամբ ու մաքենատիկական մեթոդներով, սակայն հեղինակավոր տնտեսագիտության այդ կարծիքի կողմնակիցների թիվը շարունակել է աճել, իսկ տնտեսագիտության տեսության վերաբերյալ նրանց բացասական գնահատականները դարձել են ավելի խիստ:

Տնտեսագիտության տեսության նկատմամբ այդպիսի բացասական տրամադրվածության աճը հիմնականում բացառություն է ինչպես շատ երկրների, նաև, ընդհանուր առմանք, հաճաշյարհային տնտեսությունում սոցիալ-տնտեսական խնդիրների աճով ու բարդացումով, այնպիսի էլ այդ գիտության էպիստեմոլոգիական<sup>\*</sup> հիմնավորվածության ցածր մակարդակով: Տնտեսագիտության տեսության ձևավորման բոլոր փուլերում հիմնականում գիտակցվել ու պահպանվել են էպիստեմոլոգիական կանոնի պայմաններն ու պահանջները, ըստ որի, որոշակի ենթադրությունների հիման վրա մշակված և որպես ապացույց ներկայացված եզրահանգումները տրամաբանական հետևորդուններ են այդ ենթադրություններից, այսինքն՝ դրանք հանաւողելի են և ունեն ներքին տրամաբանական համաձայնեցվածություն և կապակցվածություն: Սակայն ինչքան էլ կարևոր ու անհրաժեշտ էր այդ կանոնով առաջնորդվելը, միևնույն է, դա բավարար չէր տնտեսագիտության տեսության՝ էկոնոմիկայի՝ որպես գիտության կայացման համար: Ինչպես բոլոր մյուս գիտություններում, այստեղ ևս պահանջվում էր նախնառաջ ապահովել գիտական ենթադրությունների և դրանց հիման վրա մշակված եզրահանգումների համապատասխանությունն իրականու-

<sup>1</sup> Տե՛ս Էնկիպ Ա., Почему экономикс еще не наука, гл. 14. В книге „Теория капитала и экономического роста“/под ред. С. Дзарасова/. М., МГУ, 2004, էջ 342:

\* Էպիստեմոլոգիա (epistemologia, эпистемология) նշանակում է ճանաչողության անսուրյուն: Տե՛ս Словарь иностранных слов. М., 1988, էջ 603:

թյանը: Լրամշակված համարվելու տեսակետից՝ ոչ պակաս կարենոր ու անհրաժեշտ են նաև համապարփակության և հակիրճության կանոնների պահպանումը:

Ինչ խոսք, այդպիսի իրավիճակի հիմնական պատճառը էկոնոմիկսի՝ նեղասական\* օրբողոքսալ տեսության սկզբունքներով ձևավորված գիտության և իրական սոցիալ-տնտեսական երևոյթների անհամապատասխանությունն է: Սիանգամայն հասկանալի է, որ այդպիսի գիտության հիման վրա մշակված և իրականացվող պետական քաղաքականությունը մատնվելու էր անհաջողության: Ելմելով դրանից՝ Ա. Էյխները արտահայտում է կարծիք, որ այսօր՝ հարյուր տարի անց, մենք՝ տնտեսագետներս, ստիպված ենք ընդունելու այն փաստը, որ էկոնոմիկսը ինտելեկտուալ առումով դարձել է սնանկ գիտություն<sup>2</sup>: Իհարկե, այսպիսի գնահատականը շատ խիստ է, ուստի, քնական է, որ դա վիճարկվում է: Էկոնոմիկսը այդքան անհատ ու սնանկ լինել չէր կարող. չէ՝ որ մարդկությունն երկար ժամանակ մշակել էր այն ու առաջնորդվել դրանով: Այդ դեպքում հարց է ծագում, թե ինչու էկոնոմիկսը այդպես էլ հավաստի գիտություն չդարձավ: Պատասխաններից առաջինն այն է, որ տնտեսագետներն իրենց հետազոտություններում, առաջնորդվելով նեղասական տնտեսագիտության սկզբունքներով, հարկ չեն համարել պահպանել էպիստեմոլոգիական այն կանոնները, որոնք ընդհանուր են գիտության բոլոր ոլորտների և ուղղությունների համար: Խոսքը, մասնակորապես, վերաբերում է այն կանոնին, որ ցանկացած գաղափար կամ տեսություն, գիտության որ ճյուղին էլ պատկանի, պետք է համապատասխանի իրականությանը՝ ունենալով փորձառական հաստատում: Երկրորդ պատասխանը հիմնվում է հեղինակավոր տնտեսագետների այն փաստարկների վրա, որ էկոնոմիկսի հիմքը կազմող միկրոտնտեսագիտության նեղասական սկզբունքները հիմնականում մտացածին, ոչ գիտական ու չապացուցված պնդումներ են<sup>3</sup>: Հետևաբար՝ զարմանալի չէ, որ այդ սկզբունքները սոցիալ-տնտեսական իրավանությանը չեն համապատասխանում, և դրանց հիման վրա մշակված քաղաքականությունն ի սկզբանե դատապարտված էր անհաջողության՝ անկախ այն բանից, թե որտեղ և ում կողմից էր մշակվել և իրագործվել:

Առաջին հայացքից այդպիսի տեսակետը խիստ է քվում: Էկոնոմիկսը, որպես տնտեսագիտության ինքնուրույն ոլորտ, ձևավորվել է նեղասական տնտեսագիտության սկզբունքների հիմնա վրա, զարգացել ու բարեփոխվել է բավական տևական ժամանակահատվածում և առ այսօր աշխարհի բոլոր համալսարաններում ուսուցանվող հիմնական տնտեսագիտական դասընթացն է, գիտագործնական հետազոտությունների և սոցիալ-տնտեսական կառավարման գերակայող տեսությունը: Որպես այդպիսին՝ էկոնոմիկսը չէր կարող լինել մտացածին ու չհիմնավորված, ոչ գիտական ու չապացուց-

\* Նեղասական և նորդասական եզրերը հոդվածում տարբերակվում են: Որպես հիմնավորում՝ Курс экономической теории (учебник под ред. Чепурина М.). М., 2003, էջ 40:

<sup>2</sup>Տե՛ս Էյխեր Ա., նշվ. աշխ., էջ 342:

<sup>3</sup>Տե՛ս նոյն տեղը, էջ 342:

ված պնդումներից բաղկացած գիտություն<sup>4</sup>: Սակայն ինչքան էլ համոզիչ լինեն այդ փաստարկները, նույնքան ծանրակշիռ ու հիմնավոր են ընդդիմախոսների տեսակետները էկոնոմիկսի՝ էպիստեմոլոգիական կանոններին անհամապատասխանության վերաբերյալ: Նրանց կարծիքով՝ այդ գիտության միկրոտնտեսական սկզբունքները, իրենց նախնական ձևակերպումներից հետո, բովանդակային փոփոխության չեն ներարկվել: Կատարելագործվել են դրանց ձևակերպման ու մաքենատիկորեն ներկայացման եղանակներն ու մեթոդները, սակայն գիտության էպիստեմոլոգիական կանոններին համապատասխանության խնդիրը մնացել է անլուծելի: Առ այսօր չի հաստատվել էկոնոմիկսի միկրոտնտեսագիտական սկզբունքների համաձայնեցվածության և իրականության հետ համապատասխանության հանգամանքը<sup>5</sup>: Դա վերաբերում է նեղանական տնտեսագիտության սկզբունքներից յուրաքանչյուրին՝

- օգտակարության ֆունկցիայով կամ անտարերության կորերով ներկայացվող միկրոտնտեսագիտական սկզբունքին, որն արտահայտում է բարիքների միջև ազատ ընտրություն կատարելու սպառողի վարքի դրսուրումների տնտեսագիտական բովանդակությունը,

- արտադրական գործոնները մեկը մյուսով ազատ փոխարինման ֆունկցիայով կամ համասեռ իզորվանատներով ներկայացվող միկրոտնտեսագիտական սկզբունքին, որը պարունակում է յուրաքանչյուր արտադրատեսակի արտադրության համար անհրաժեշտ ռեսուրսների ազատ փոխարինման հնարավորությունների գոյության տնտեսագիտական բովանդակությունը,

- առանձին ապրանքատեսակների պահանջարկի և առաջարկի ֆունկցիաներով կամ համապատասխան կորերով ներկայացվող միկրոտնտեսագիտական սկզբունքին, որն արտահայտում է սպառողների և արտադրողների վարքի դրսուրումների և այդ հիմքով հավասարակշռված շուկայական գների ձևավորման տնտեսագիտական բովանդակությունը,

- արտադրական ֆունկցիայով կամ արտադրական գործոններից յուրաքանչյուրի՝ հատկապես կապիտալի սահմանային արտադրողականության կորերով ներկայացվող սկզբունքին, որն ընդգրկում է կապիտալի նվազող արտադրողականության և այդ հիմքով եկամտի բաշխման տնտեսագիտական բովանդակությունը:

Նեղանական տնտեսագիտության այս սկզբունքները, որոնց համաձայնեցվածության և իրական տնտեսական երևույթների հետ համապատասխանության վերաբերյալ ապացույցներ ու հիմնավորումներ այդպես էլ չգտնվեցին, այնուհենդեռ, որոշակի պայմաններում ու դեպքերում առանձնակի դեր ու նշանակություն ստացել են, արդյունավետ կիրառություններ ունեցել են: Սակայն դրանք վերաբերում են միայն միկրոտնտեսագիտական հետազոտություններին և միկրոտնտեսությունների գործնական կառավարմանը:

<sup>4</sup> **Տե՛ս Нестеренко А.**, О чём не сказал У. Баумоль: вклад XX столетия в философию экономической деятельности, ВЭ, 2001, № 7, էջ 4:

<sup>5</sup> **Տե՛ս Баумоль У.**, Чего не знал А. Маршал: вклад XX столетия в экономическую теорию, ВЭ, № 2, 2001, էջ 73-107:

Նեղասական մակրոտնտեսագիտությունը մշակվել ու ձևավորվել է ավելի ուշ և, որ շատ կարևոր է, առավելապես իրական սոցիալ-տնտեսական երևույթների ուսումնասիրման ու կառավարման հիմքի վրա, ուստի և գիտության էպիստեմոլոգիական կանոններին համապատասխանության տեսակետից խնդիրներ չպետք է լինեին: Առավել ևս, որ նեղասական մակրոտնտեսագիտությունը հետազայում հարստացվել ու լրացվել է քեյնայան գաղափարներով, որոնք ևս բացահայտվել ու մշակվել են տնտեսագիտության նվաճումների և տնտեսավարման համաշխարհային փորձի վերլուծության հիման վրա: Այսուհանդեռձ, այսօր նեղասական մակրոտնտեսագիտությունը ևս շատ հեղինակավոր տնտեսագետների կողմից չի ճանաչվում որպես էպիստեմոլոգիական կանոններին համապատասխանող տեսություն: Պատճառը միայն այն չէ, որ քեյնայան մակրոտնտեսագիտական հեղափոխությունը «Ճնշվեց» հիկոս-սամուելոնյան նորվալրասյան հակահեղափոխությամբ, այլ նաև այն, որ նեղասական մակրոտնտեսագիտությունը մշակվել ու ձևավորվել է նեղասական միկրոտնտեսագիտական կանխադրույթների (պոստուլատների) հիման վրա<sup>6</sup>: Հենց դա է պատճառը, որ համաձայնեցվածության և իրականության հետ համապատասխանության ստուգման թեստերի պահանջները չեն բավարարում նաև հետևյալ երկու մակրոտնտեսագիտական սկզբունքները՝

- խնայողություններ-ներդրումներ և փողի պահանջարկ-առաջարկ հավասարակշռություններն արտահայտող մոդելներով կամ IS-LM կորերով ներկայացվող մակրոտնտեսագիտական սկզբունքը, որն ամփոփում է հավասարակշռության պայմանները բավարարող փոխառության տոկոսադրույթի մակարդակից ազգային եկամտի մակարդակի կախվածության տնտեսագիտական բովանդակությունը,

- գների ընդհանուր մակարդակի աճի՝ ինֆլյացիայի տեմպից կախված զբաղվածության մակարդակի նվազման կամ Ֆիլիպսի կորով ներկայացվող մակրոտնտեսագիտական սկզբունքը:

Վերոնշյալ նեղասական տնտեսագիտության սկզբունքներից որևէ մեկի կամ խմբի հիման վրա մշակված ցանկացած տնտեսագիտական գաղափար, փաստարկ կամ եզրահանգում ներքին բովանդակությամբ նեղասական է: Հետևաբար՝ էկոնոմիկսը, բաղկացած լինելով նեղասական տնտեսագիտության սկզբունքներից և դրանց հիման վրա մշակված գաղափարներից ու եզրահանգումներից, ներքին կառուցվածքով նեղասական տնտեսագիտություն է: Եվ քանի որ կառուցվածքային տարրերը չեն բավարարում համապատասխանության և համաձայնեցվածության պահանջները, որեմն այդ գիտությունը չի համապատասխանում էպիստեմոլոգիական ընդիհանուր կանոնների պահանջներին, այսինքն՝ չունի իր գաղափարների ու եզրահանգումների և դրանց հիման վրա բացահայտված օրենքների հիմնավորման ու հաստատման արդյունավետ մեթոդներ ու եղանակներ:

Գիտության և փիլիսոփայության պատմությունը հարուստ է նշանական պահպանման անհրաժեշտության վերաբերյալ ցուցումներով ու տեսակետներով: Սկզբնական շրջանում դրանք վերաբերել են բնագիտու-

<sup>6</sup> Տե՛ս Էյխեր Ա., նշվ. աշխ., էջ 348:

թյան և հումանիտար գիտությունների, մասնավորապես՝ տնտեսագիտության համեմատական վերլուծությանը: Գերակայել է այն տեսակետը, որ տնտեսագիտական հետազոտությունները պետք է իրականացվեն բնագիտական և ճշգրիտ մաթեմատիկական մեթոդաբանությամբ ու եղանակներով: Հակառակ տեսակետի համաձայն՝ բնագիտամաթեմատիկական մեթոդաբանությունը, եղանակները ի զորու չեն արտահայտելու և գնահատելու տնտեսագիտական երևույթների, գաղափարների ու եզրահանգումների ողջ բարդությունն ու առանձնահատկությունները: Տնտեսագիտության զարգացման հետագա լմբացքն ու արդյունքները հաստատեցին գերակայող այդ տեսակետի ճշմարտացիությունը: Սակայն դրանք վկայում են նաև այն մասին, որ տնտեսագիտությունում՝ այսօր, բնագիտության մեջ՝ շատ ավելի շուտ, առաջնային են ընդհանուր գիտական մեթոդները՝ համակարգային մոտեցումը, ինքնակազմակերպման ու ինքնազարգացման սկզբունքները և, այդ հիմքերով՝ զարգացման էվոլյուցիոն մեթոդը: Այժմ արդեն բոլորն ընդունում են տնտեսագիտության մեջ ինչպես տեղեկատվական և տեխնիկական միջոցների, այնպես էլ բնագիտության մեջ և ճշգրիտ գիտություններում ի սկզբանե կիրառություն գտած ընդհանուր գիտական մեթոդների կիրառման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Այդպիսի շրջադարձը պայմանավորված է նախ՝ գիտության առանձին ոլորտներում, մասնավորապես՝ տնտեսագիտության մեջ, հետազոտությունների արդյունքների ներքին համաձայննեցվածության և իրականության հետ համապատասխանության կանոններին չբավարարելու բազմաթիվ փաստերով, երկրորդ՝ ուսումնասիրությունների իրականացման դասական դետերմինիստական օրենքներով առաջնորդվելու ժամանակավորեալ ու անարդյունավետ փորձներով, երրորդ՝ գիտության այն ոլորտներում և ուղղություններում, որտեղ հետազոտվելու են բարդ ու դինամիկ փոփոխվող համակարգեր ու երևույթներ, հավանականական դետերմինիստական օրենքների կիրառման առաջնորդվելու անհրաժեշտությամբ:

Տնտեսագիտության ներդասական սկզբունքները ձևավորվել են այն ժամանակներում, երբ գիտությունների բացահայտած օրինաչափությունների ներքին համաձայննեցվածությունն ու իրականության հետ համապատասխանությունը գնահատվում էին ըստ դասական դետերմինիստական օրենքների, երբ դրանց հիման վրա կատարված բացահայտումներն ու կանխատեսումները համարվում էին հավաստի ու միարժեք, երբ վիճակագրական՝ հավանականական օրենքները բնութագրվում էին որպես ոչ լիարժեք գիտական և դիտարկվում էին դետերմինիստական օրենքներից դուրս, լավագույն դեպքում՝ որպես օժանդակ մեթոդներ փորձառական փաստերի ընդհանրացման ու կանոնակարգման նպատակներով<sup>7</sup>: Վիճակագրական օրենքների նկատմամբ տնտեսագետների վերաբերմունքը սկզբունքորեն փոխվեց բվանտային մեխանիկայի օրենքների բացահայտումից հետո, երբ դրանց կիրառությամբ կանխատեսումները հավաստի արդյունքներ ապահովեցին<sup>8</sup>:

<sup>7</sup> Ст'я Рузавин Г., Концепции современного естествознания. М., 2003, էջ 104:

<sup>8</sup> Ст'я Бурлакчов В., Экономическая наука и эконофизика: главные темы диалога, ВЭ, № 12, էջ 63:

Դասական դետերմինիստական օրենքները կարող են ճշգրիտ ու միարժեք բացահայտումներ ապահովել գիտության այն ոլորտներում, որտեղ հնարավոր է վերացարկվել համակարգերի ու երևոյթների փոփոխման և փոխգործողությունների բարդ բնույթից, որտեղ հնարավոր է հաշվի շառնել պատահականությունները, որտեղ կարելի է անտեսել բազմաթիվ ու բազմաբնույթ գործնների միաժամանակյա ազդեցությունը, այսինքն՝ այնտեղ, որտեղ հնարավոր է անհամեմատ պարզեցնել իրականությունը: Բարդ համակարգերի և երևոյթների ուսումնասիրության դեպքում, որոնք հանդես են գալիս բազմատեսակ տարրերով, բարդ կառուցվածքով ու վարքի դրսերումներով, որոնց նկարագրությունն անհմաստ է որևէ այլ եղանակով, պետք է դիմել վիճակագրական օրենքներին: Օրենքները համարվում են վիճակագրական կամ հավանականական՝ կախված տեղեկատվության բնույթից, որ օգտագործվում է օրինաչափությունների բացահայտման և այդ հիմքով փաստարկումների, եզրահանգումների և կանխատեսումների համար: Ընդ որում, ինչպես տեղեկատվությունը, այնպես էլ այդ հիմքով ստացվող արդյունքները չեն կարող լինել միարժեք և հավաստի. դրանք հավանականական բնույթի են:

Անտարակույս, ճիշտ է այն հետևությունը, որ նեոդասական տնտեսագիտության սկզբունքները մշակվել են դասական դետերմինիստական օրենքներով՝ առաջնորդվելով տնտեսական համակարգերի ու երևոյթների պարզեցված օրինաչափություններով, հիմք ընդունելով դրանց փոփոխման ու փոխգործողությունների պատճառահետևանքային տրամաբանությունը: Այսօր տնտեսական համակարգերի ու երևոյթների հանդես գալու, փոփոխման և փոխգործողությունների կարգավիճակն ու բնույթը փոխվել են, դրանց պարզեցումն այլև անհմաստ ու անբույլատրելի է, ուստի և օրինաչափությունների բացահայտման նապատակով պետք է իրականցվեն առավելապես հավանականական դետերմինիզմի օրենքներով ու մեթոդներով, մասնավանդ քվանտային տեսությունն այդպիսի մոտեցման իրավացիությունը հիմնավորել ու հաստատել է<sup>9</sup>:

Քվանտային տեսությունը ատոմի կառուցվածքի ձևավորման, փոփոխման գործընթացներում էլեկտրոննին վերագրում է «վարքի ազատ դրսերման» հատկանիշներ, էլեկտրոնն ինքնուրույն է «որոշում», թե ատոմի որ էներգետիկ մակարդակ է թոշելու, այսինքն՝ նախապես «տեղյակ է», թե ատոմի էներգետիկ սանդուղքի որ սանդղակում է հանգրվանելու՝ թոշելով դեպի միջուկ<sup>10</sup>: Բնական է, քվանտային տեսությանը վերաբերող այս նոր տեսակետը ժամանակին բուռն քննարկումների և անհամաձայնությունների տեղիք է տվել, սակայն հետազայում բազմաթիվ փորձագիտական հետազոտություններով հաստատվել է դրա ճշմարտացիությունը: Էլեկտրոնի ազատ վարքը պայմանավորված է իր շարժման ալիքային հատկություններով, որոնք ձեռք է բերում՝ գտնվելով տարաբնույթ էներգետիկ դաշտերում և լրացնելով իր մասնիկային հատկությունները: Էլեկտրոնի ցատկի խորությունից է կախված դրա արձակած քվանտի, լույսի հաճախականու-

<sup>9</sup> Տե՛ս Պյազանի Գ., նշվ. աշխ., էջ 90-105:

<sup>10</sup> Տե՛ս Դանին Դ., Վերоятностный мир, գլ. 4. „Знание”, 1981, էջ 92:

թյան կամ գույնի էներգայնությունը: Ցատկի խորությունը՝ թոփքի բափը, էլեկտրոնը որոշում է թոփքի սկզբին՝ ունենալով վարքի դրսևորման ազատություն: Թոփքի ընթացքում ճառագայթման հաճախականությունը փոխվել չի կարող. յուրաքանչյուր քվանտ միագույն է, այսինքն՝ էլեկտրոնն ի սկզբանե կողմնորոշվում է ներքին մակարդակներից մեկի նկատմամբ, ազատ ընտրություն է կատարում որևէ ուղեծրում հայտնվելու օգտին՝ նախապես «որոշելով իր քվանտային ճակատագիրը»:

Ծվանտային տեսությունում էլեկտրոնի «վարքի ազատ դրսևորման» գաղափարի գոյության գաղտնիքը բացատրվում է նախևառաջ նրանով, որ եթե կանխատեսվող արդյունքը հավաստի պատահար է, ուրեմն կարելի է պնդել դրա նախապես հայտնի լինելու մասին, երկրորդ՝ որ միկրոհամակարգերի և միկրոմակարդակում հանդես եկող երևույթների փոփոխման, զարգացման և այդ ընթացքում ցուցաբերած վարքի դրսևորումների օրինաշափությունները հիմնականում համապատասխանում են հավանականային դետերմինիստական օրենքներին, կարող են բացահայտվել, բացատրվել ու կանխատեսվել այդ օրենքներով: Այդպիսի փորձեր արդեն կատարվել են, սակայն դրանք առայժմ բնագիտական նմանօրինակներով ներկայացված, տնտեսագիտական հիմնավորումներ, ինչպես նաև ներքին համաձայնեցվածություն չունեցող և մեկը մյուսից առանձին հետազոտություններ են, ուստի և չեն կարող հանդես գալ ամբողջական տեսության կամ մերոդի կարգավիճակով<sup>11</sup>:

Ծվանտային տեսության՝ էլեկտրոնի «վարքի ազատ դրսևորման» վերոնշյալ թեզի հիմնավորման նպատակով անցկացված գուգահեռները, ճիշտ է, բացահայտող չեն, բայց օրինակելի են ու պարզաբանող: Չուգահեռներն օգնում են հետազոտության խնդրի ընդհանրացմանը՝ դարձնելով այն աշխարհաճանաչողական հիմնախնդիր, իսկ դրա լուծման արդյունքում բացահայտվում են սկզբունք, օրինաչափություն կամ օրենք: Մեր խորին համոզմամբ՝ բնագիտական և, մասնավորապես, քվանտային տեսության գաղափարներին զուգահեռների անցկացումը հանգեցնելու է շատ կարևոր միկրոտնտեսագիտական սկզբունքների, օրինաչափությունների ու օրենքների բացահայտմանը, բացատրմանը և կանխատեսմանը: Այսպես օրինակ՝ միևնույն նյութական համակարգում կամ երևույթում դասական անընդհատության և քվանտային ընդհատության սկզբունքների զուգահեռաբար գոյությունը կարող է օրինաչափ համարվել նաև միկրոտնտեսական համակարգերում ու երևույթներում կատարվող զորդընթացների համար: Ակտիվների շրջապտույթը միկրոտնտեսական համակարգում հնարավոր է ներկայացնել ատոմի կառուցվածքում էլեկտրոնների հոսքերի նմանօրինակով: Ակտիվների փոխադարձ փոխակերպումը, դրանց միջև փոխազործողությունը, ինչպես նաև էներգիայի մասնակի կամ լրիվ ծավալով փոխանցումը միկրոտնտեսական համակարգերում կարող են ներկայացվել ատոմի կառուցվածքում էլեկտրոնների քվանտային ճառագայթմամբ և դրանց կանմամբ ընթացող գործընթացների նմանօրինակով: Ինչպես ատոմի կառուցվածքում էլեկտրոնների հոսքը, այնպես էլ միկրոտնտեսական համա-

<sup>11</sup> Ст.у Хренников А., Шустова О., Квантовая модель фондового рынка в кн. „Экономофизика: Современная физика в поисках экономической теории”. М., 2007:

կարգերում ակտիվների հոսքն անհրաժեշտ է ներկայացնել թե՛ դասական և թե՛ հավանականային դետերմինիստական սկզբունքներից ելնելով՝ նկատի ունենալով դրանց համապատասխանությունը այդ օրենքներին ու օրինաշափություններին: Վերջապես՝ ակտիվների սպառման և արտադրության էներգետիկ բնութագրությունը հարկ է լրացնել դրանց շրջանառության տեղեկատվությամբ՝ հաշվի առնելով, որ այդ գործընթացները միկրոտնտեսական համակարգերում ընթանում են ակտիվների էներգետիկ-մասնիկային և տեղեկատվական-ալիքային հատկանիշներով, այնպես, ինչպես էլեկտրոնների հոսքի մասնիկային հատկանիշներով բնութագրությունն է լրացվում դրանց ալիքային հատկանիշներով բնութագրությամբ: Ընդ որում, եթե էլեկտրոնի ալիքային հատկանիշների առկայությունը ֆիզիկական դաշտերի ազդեցության հետևանք է, ապա ակտիվների ալիքային-տեղեկատվական հատկանիշների գոյությունը՝ քաղաքական, սոցիալական և տնտեսական ինստիտուտների գործունեության տեղեկատվական դաշտերի ազդեցության հետևանք:

Այսպիսի գուգահեռների անցկացումը, անկասկած, կնպաստի նեղասական տնտեսագիտության սկզբունքների վերահմաստավորմանը, հիմնավորմանը, ներքին համաձայնեցվածության և իրականության հետ դրանց համապատասխանության ապահովմանը:

Նեղասական միկրոտնտեսագիտության սկզբունքներից և ոչ մեկը չի կարող հիմնավորվել, նախ՝ տնտեսագիտական բովանդակության տեսակետից<sup>12</sup>, երկրորդ՝ չի կարող հաստատվել միայն դասական անընդհատության մեթոդաբանությամբ բացահայտված ու ներկայացված լինելով: Ինչպես որ բարիքները չեն կարող ցանկացած հարաբերակցությամբ փոխարկվել (անտարբերության կորերով ներկայացվող), այնպես էլ արտադրության գործոնները չեն կարող փոխադարձ փոխարինվել ցանկացած հարաբերակցությամբ (իզոքվանատներով ներկայացվող): Ինչպես որ պահանջարկն ու առաջարկը չեն կարող առաջացնել գների անընդհատ փոփոխություններ, այնպես էլ աշխատանքի և կապիտալի սահմանային արտադրողականությունը չի կարող համաձայնական ու ցանկացած չափողականությամբ նվազել: Անկասկած, քվանտային ընդհատության գաղափարներն այստեղ պետք է իրենց կիրառությունը գտնեն:

Քվանտային տեսությունը ասում է կառուցվածքում էլեկտրոն-մոլորակի ուղեծրային շրջապտույտն իր միջուկ-արևի շուրջ բացատրում է դասական մեխանիկայի անընդհատության սկզբունքից ելնելով, այն դեպքում, եթե միևնույն այդ կառուցվածքում էներգիայի կայուն մակարդակների ուղեծրային սանդուղքի գոյությունը բացատրում է քվանտային ընդհատության սկզբունքից ելնելով: Էներգիայի կայուն մակարդակների ուղեծրային սանդուղքի սանդղակները հաջորդափոխվում են ամբողջ քվային համարակալումներով, և դրանց միջև տարածությունը նվազում է միջուկից հեռանալով: Միջուկի անմիջական հարևանությամբ գտնվող թույլատրելի ուղեծրային էներգետիկ մակարդակի առաջին աստիճանից է սկսվում դրանց ոչ անընդհատ, ամբողջ քվային և աստիճանակարգային դասավորվածությամբ ներ-

<sup>12</sup> Տե՛ս Ելայգ Մ., Экономическая мысль в ретроспективе. М., 1994, էջ 71-72:

կայացվող ցանցը: Միջուկից հեռանալուն զուգահեռ, էներգետիկ մակարդակների՝ ուղեծրերի միջև տարածությունը նվազում է՝ դառնալով անշշարելի, այսինքն՝ էներգետիկ մակարդակների աստիճանակարգման ընդհատվածությունը փոխարինվում է անընդիհատությամբ<sup>13</sup>:

Քվանտային տեսության հետ զուգահեռնամբ կարող ենք պնդել, որ միկրոմակարդակային համակարգերում և երևույթներում գործընթացները պետք է հիմնականում բնութագրվեն ու ներկայացվեն քվանտային ընդհատվածությամբ՝ նախապես հիմնավորելով իրականության հետ դրանց համապատասխանությունը և ներքին համաձայնեցվածությունը: Ներդասական սկզբունքները, այդպիսի բնութագրությամբ, կունենան «մասնիկային»՝ զուտ տնտեսագիտական բովանդակություն: Դասական անընդհատությունն այդ դեպքում կօգտագործվի հիմնականում մակրոտնտեսական համակարգերի և երևույթների «ալիքային» բնութագրման ու ներկայացման տեսությունում:

Քվանտային տեսության գաղափարներին զուգահեռներ անցկացնելու՝ այստեղ մեջբերված հայեցակարգային մոտեցումները հնարավորինս ամբողջացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում մեր դիտարկումները լրացնել «քվանտ» և «գործողության քվանտ» գաղափարները միկրոտնտեսագիտությունում օգտագործելու անհրաժեշտության և իրավաչափականության մասին նշելով ևս:

Մ. Պլանկի սահմանմամբ՝ «քվանտը» էներգետիկայի տարր է՝ ճառագայթի էներգայնությունը արտահայտող ֆիզիկական միավոր: Առողմի յուրաքանչյուր ճառագայթ չափվում է քվանտների այն քանակով, որքան դրա ալիքի տատանումների հաճախականությունն է էլեկտրամագնիսական դաշտում, և ինչքան մեծ է այդ ճառագայթման հաճախականությունը, այնքան մեծ է դրա քվանտի էներգիան: Կանաչ լույսի ճառագայթի քվանտն ավելի մեծ է, քան կարմրինը, իսկ ուլտրամանուշակագույնինը մեծ է կանաչից: Ունտգենյան ճառագայթների հաճախականությունը էներգիայի մեծությամբ գերազանցում է լուսային սպեկտրոններից յուրաքանչյուրի հաճախականության քվանտին: Լուսային ճառագայթներից յուրաքանչյուրը տատանումների իր հաճախականությունն ունի, սակայն բաժանման միավորն ընդհանուր է: Տարբեր չափերի, մեծությունների, էներգայնության ճառագայթների՝ քվանտների բաժանման միավորը, այսպես կոչված, «նվազագույն ֆիզիկական գործողության» մեծությունն է: «Եթե բնության մեջ ինքնուրույն տեղի է ունենում որևէ փոփոխություն, ապա դրա համար անհրաժեշտ գործողության քանակը հնարավոր ամենափոքրն է»<sup>14</sup>: Պիեռ-Լուի դե Սոպերտյուի կողմից դեռևս 18-րդ դարում ձևակերպված քնական այդ օրենքը իր արտահայտությունն է գտել «գործողության քվանտի» գաղափարում և օգտագործվել էլեկտրոնի, ինչպես նաև ատոմի էներգայնությունը ստացիոնար վիճակում չափելու համար: Եվ այդ մեծության առանձնացման ու չափման համար Մ. Պլանկը սահմանել է իր «հ» հաստատունը, որով արտահայտել է ճառագայթների բաժանելիության մասշտաբը: Ինչ վերա-

<sup>13</sup> Տե՛ս Դանին Դ., Վերоятностный мир, գլ. 4. „Знание”, 1981, էջ 90-115: Рузавин Г., նշվ. աշխ., էջ 10-32:

<sup>14</sup> Տե՛ս Դանին Դ., նշվ. աշխ., էջ 68:

բերում է «գործողության քվանտի» գաղափարին, ապա ժամանակակից ֆիզիկայի լեզվով ու տրամաբանությամբ՝ առանց էներգիայի և ժամանակի ծախսումների, բնության մեջ ոչինչ տեղի չի ունենում, իսկ դրանց համատեղ ծախսով իրականացվող գործողության արդյունքը կարող է չափվել, արտահայտվել էներգիայի և ժամանակի արտադրյալով, և միայն այդկերպ է հնարավոր հաստատել, որ էներգիայի փոքր քանակը երկար ժամանակահատվածում կատարում է այնպիսի գործողություն, ինչպիսին էներգիայի մեծ քանակը՝ կարճ ժամանակահատվածում:

Ինչ խոսք, եթե անհրաժեշտ ամենափոքր գործողության գոյության բնական օրենքն ունիվերսալ է և առկա է միշտ ու ամենուր՝ նաև մարդկային գործունեության բոլոր ոլորտներում և ուղղություններում, ապա ինչո՞ւ որպես այդպիսին չի կարող հանդես գալ «գործողության քվանտը», ինչո՞ւ այն չի կարող դառնալ համընդհանուր նշանակության չափի միավոր հնարավոր ամենափոքր գործողությանն անհրաժեշտ էներգիայի մեծության չափման համար: Գործողության քվանտն այս դեպքում ևս կդառնա ծախսվող և ստեղծվող բարիքների ու ակտիվների էներգայնության չափաքանակը տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում:

Քվանտային տեսությամբ հիմնավորվեց, որ «գործողության քվանտը» կարող է որպես չափի միավոր հանդես գալ էլեկտրամագնիսական և ուժային դաշտերում առկա նյութական համակարգերի և երևույթների համար, այսինքն՝ սահմանափակվել միայն ֆիզիկական երևույթների ու համակարգերի շրջանակով: Համոզված լինելով, որ «գործողության քվանտը» կարող է հանդես գալ որպես համընդհանուր նշանակության չափի միավոր, ավելացնենք նաև, որ այդ դեպքում «ի» հաստատունը կդառնա չափի ոնիվերսալ միավոր ոչ միայն էլեկտրամագնիսական և ուժային դաշտերի, այև քաղաքական, սոցիալական և տնտեսական դաշտերում գոյություն ունեցող համակարգերի ու երևույթների համար՝ ներառյալ տնտեսական գործունեության ոլորտներն ու ուղղությունները: Ավելին, «ի» հաստատունը համընդհանուր նշանակությամբ չափի միավոր ընդունելու դեպքում հաղթահարվում է մի բարդ խոչընդոտ ևս. միկրոտնտեսագիտությունում քվանտային ընդհատությունը դառնում է դասական անընդհատությունը լրացնող սկզբունք, որը կլուծի նեղասական սկզբունքների՝ իրականության հետ համապատասխանության և ներքին համաձայնեցվածության բարդ խնդիրը:

## АРЗУМАН АКОПЯН

Доцент ЕГУ,  
кандидат экономических наук

***К вопросу о применимости естественно-научных принципов в экономических исследованиях.***- Традиционно наиболее перспективными являются те научно-исследовательские направления, которые проводятся на стыке разных наук. Они позволяют формировать единый понятийный аппарат для объяснения, понимания и предсказания реальных систем и явлений, разрабатывать и внедрять универсальные и более эффективные подхо-

ды и механизмы для разрешения разнородных, сложных проблем и задач в естественных и общественных науках.

По нашему мнению, исследования сложных экономических систем и явлений с сочетанием идей и принципов экономической науки и физики могут выявлять новые и весьма ценные результаты. Предполагая такие результаты, предлагается вместо принципов неоклассической экономической теории, которые так и не нашли своего экспериментального подтверждения, воспользоваться принципами квантовой физики.

**ARZUMAN HAKOBYAN**

*Associate Professor at YSU,*

*PhD in Economics*

***On the Issue of Applying Principles of Natural Sciences in Economic Research.-*** Traditionally, the most prospective are those scientific-research areas, which are held at the intersection of different sciences. They allow us to form the most comprehensible single unit for explaining, understanding and forecasting actual systems and phenomena, develop and implement versatile and more effective approaches and mechanisms for resolving diverse, complex issues and problems in natural and social sciences.

In our opinion, the research of complex economic systems and phenomena with a combination of ideas and principles of economics and physics will identify new and very valuable results. With these expectations it is suggested that the principles of neo-classical economics, which haven't got their scientific justification, should be replaced by ideas and principles of quantum physics, which have found and confirmed their adequacy with the reality.